

Տիգրիսը՝ «արիությունը» եւ Եփրատը՝ «արդարությունը», ապա օձը՝ կը խորհրդանշէ՝ «կիրքը», Ադամի որդի Կայէնը՝ «սոփեստական եսասիրությունը», անոր կրտսեր եղբայր Աբէլը՝ «բարեպաշտությունը», Իսահակի որդի Եսաւը՝ «յիմարությունը», անոր կրտսեր եղբայր Յակոբը՝ «ճգնաւորական կեանքը», իսկ Իսահակի հայր Աբրահամը՝ «սորվելու առաքինությունը», եւայլն...:

Յոյն փիլիսոփայ Սոկրատեսէն առաջ, այսպէս կոչուած նախասոկրատեան յոյն փիլիսոփաները, առաւելաբար կը հետաքրքրուէին բնութեամբ եւ գոյութեան հիմնական 4 *նախանիւթերով* (յուն.՝ archê), որոնք են.- *կրակը, օդը, ջուրը եւ հողը*:

Վերոյիշեալ 4 նախանիւթերը կը գտնենք նաեւ Աստուածաշունչի Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ, զանազան այլաբանական իմաստներով:

Հնգամատեանի սկիզբը, այսինքն «*Գիրք Ծննդոց*»-ին (Genesis) սկիզբը, կը նկարագրուի Աստուծոյ վեցօրեայ ստեղծագործութիւնները: Փիլոն, մեծ ճարտարութեամբ, կը համեմատէ ու այլաբանական որոշ առնչութիւններ կը գտնէ մէկ կողմէն աստուածաբանական ստեղծագործութիւններուն եւ միւս կողմէն փիլիսոփայութեան մէջ, թէ՛ պիւթագորական *թիւերու խորհրդանշանակութեան* (Number Symbolism) եւ թէ Պլատոնի *գաղափարներու ուսմունքին* (Doctrine of Ideas) միջեւ:

Փիլոնի այլաբանական մեկնութեան գլխաւոր յատկանիշը կը կազմէ՝ կերպարներու եւ իրադարձութիւններու պարագային *եռադաս բաղդատութիւններու*³⁵ (լատ.՝ tertium comparationis) որոնումը ու անոնց փոխաբերական իմաստներու բացայայտումը: Վերջին հաշուով, Փիլոնի գլխաւոր նպատակը եղած է, այլաբանական մեկնութեանց միջոցով, Սբ. Գիրքի Հնգամատեանի մէջ յիշուած առանձնայատկութիւններուն ընդհանրական իմաստին որոնումն ու ճանաչումը:

Փիլոն, որպէս աստուածաբան, ինչպէս նաեւ որպէս հրեայ համայնքի ներկայացուցիչ, այլաբանական մեկնութեան կողքին կը շեշտէր նաեւ Սբ. Գիրքի Հնգամատեանի պատուէրներուն բառացի գրական իմաստը եւ անոնց իրապէս հետեւելու հարկադրութիւնը: Այլ խօսքով, Փիլոնի համաձայն, Հնգամատեանի օրէնքներն ու պատուէրները, իրենց զոյգ՝ մակերեսային ու խորաթափանց իմաստներով, ինչպէս նաեւ հոն արծարծուած փիլիսոփայական տեսակէտներով կու գային զիրար ամբողջացնել ու լրացնել:

35 Եռադաս բաղդատութիւն (լատ.՝ tertium comparationis).-

Օրինակով մը բացատրենք.-

«*Անհրաժեշտութիւնը գիտի մայրն է*» ասոյթի պարագային, մենք «անհրաժեշտութիւն – գիտ» յարաբերութիւնը կը բաղդատենք ու կը նմանեցնենք «մայր – զաւակ» յարաբերութեան: Այլ խօսքով, ինչպէս մօրմէն կը յառաջանայ *զաւակը*, նոյնպէս անհրաժեշտութենէն կը յառաջանայ *գիտը*:

Այստեղ բացայայտուող յարաբերութիւններու նմանութիւնն է, որ կը կոչուի՝ եռադաս բաղդատութիւն: